ՀԱՅԱՍՏԱՆ

ամս 16
14/III-49

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՀԱԼԷՊԻ

9(47.925)
Հ-24

947.925

ՀԱՅ ԴԱՏԸ

«Թուրքերը անցան հոնկէ.
Ամէն ինչ աւերակ եւ սուգ է».
ՎԻՔԹՈՐ ՀԻՒԳՕ

Ա 128317

ՏՊ. ՏԷՐ - ՍԱՀԱԿԵԱՆ, ՀԱԼԷՊ
1947

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Դարերու դաժան բռնատիրութենէն յետոյ՝ այսօր Հայ ժողովուրդը կ'ապրի Սովետ Հայաստանի երջանիկ իրականութիւնը: Ան՝ հայրենիք ունի եւ պետականութիւն:

Շնորհիւ Ռուս մեծ ժողովուրդի օժանդակութեան, ան ունի հնարաւորութիւն՝ համախմբուելու իր հողին վրայ: Այդ դարաւոր երազը կը դառնայ հետզհետէ ապրող իրականութիւն: 50 հազարէ աւելի հայորդիներ վերադարձած են արդէն հայրենիք ու կը վայելեն սովետ քաղաքացիի ամէն իրաւունք եւ հոգածութիւն:

Տարագիր հայերուն հայրենիք վերադարձը կը շարունակուի, եւ սակայն, որպէսզի ամբողջովին իրականանայ Հայ ժողովուրդին իր հայրենիքին մէջ ապրելու ցանկութիւնը, եւ որպէսզի արբագրուին հայ ժողովուրդին հանդէպ գործուած դարաւոր անարդարութիւններ՝ անհրաժեշտ է որ ազատագրուին մինչեւ այսօր թուրք բռնակալութեան արիւնոտ կրունկին տակ հեծող մեր հայրենի հողերը: Հայկական Դատը պէտք է վերարծարծուի: Այսօր՝ ամէն ժամանակէ աւելի, երբ ունինք պետականութիւն, երբ ունինք խաղաղասէր եւ արդարամիտ ժողովուրդներու հետ սովետ ժողովուրդներու եղբայրական միութիւնը՝ մեզի հետ:

Ահա՛ մեր անիրաւուած այլ միշտ կենսունակ Դատին պաշտպանութիւնն է որ ստանձնած են Ազգային խորհուրդները, գաղութահայութեան անունով:

Հայ ժողովուրդը մէկ մարդու պէս իր արդար եւ անկապտելի իրաւունքն է որ կը պահանջէ:

Եթէ մուրացկանի պէս, երէկ, շահախնդիր դիւանագիտութիւններու ֆոնցֆին հինք փարած, այսօր, արդար իրաւատէրի կորովով կը պահանջենք մեր հողերը: Մեր իրաւունքը անժխտելի է, ինչպէս մեր կամքը անընկուն է եւ զօրաւոր՝ մեր հայրենիքին, Սովետական Հայաստանին պէս:

Մեր հայրենի հողերուն մեզի վերադարձուիլը, նուազագոյն հատուցումը պիտի ըլլայ այնքան խժդժութեամբ մորթուած մեր մէկ ու կէս միլիոնին· եւ պիտի ըլլայ դոյզն հատուցումը անցեալ ու մանաւանդ այս պատերազմին մէջ Դաշնակիցներու յաղթանակին եւ աշխարհի խաղաղութեան համար մեր բերած անուրանալի եւ կարեւոր օժանդակութեանց:

Ահա ա՛յս է մեր ժողովուրդին պահանջը:

Ներկայ հրատարակութեան նպատակն է այս ուղղութեամբ կատարուած աշխատանքն ու մեր իրաւունքին փաստերը ծանօթացնել հայ ժողովուրդին:

Իրաւունք մը լաւ պաշտպանելու համար պէտք է զայն լաւ ճանչնալ:

ՀԱԼԼԷՊԻ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅ ԱԶԳ. ԽՈՐՀՈՒՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԸ

ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱՎԱՐՁՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇՆԱԳՐԵՐՈՒ ՀԻՄԱՆ ՎՐԱՅ

ՅՈՒՇԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒԱԾ 1946 ՅՈՒԼԻՍ 29-Ի ԲԱՐԻԶԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ

ԴԱՏԸ

Բոլոր երկիրներու հայերը Յաղթականներու արդարադատութեան դարձեալ կը ներկայացնեն իրենց պահանջները։

Յաղթականները պէտք չէ անտեսեն Հայկական Դատը, քանի որ Աշխարհի ապագայ խաղաղութեան հաստատ հիմերը նետելու պարտականութիւնը վստահուած է իրենց։ Այս Դատը որ լքուեցաւ բազմաթիւ անգամներ, մարդկութեան ծանօթ ամէնէն արդար դատն է։

Հայկական պահանջները նուիրագործող դաշնագրերը չգործադրուեցան դժբախտաբար, արեւմտեան քաղաքականութեան շրջադարձին բերումով, շրջադարձ՝ որմէ միայն հայ ժողովուրդը չէ որ տառապեցաւ։

Հայկական պահանջներն են՝ Մայր-Հայրենիքին կցել արեւելեան այն նահանգները, որոնք աւելի քան 40 դարերէ ի վեր հայկական հողեր են, հայ բնակչութեամբ, որոնց սահմանները ճշդորոշուեցան Նախագահ Վիլսընի կողմէ, երբ ան 1920ի Սէվրի միջազգային դաշնագրով իրաւարար նշանակուեցաւ։ Եւ սակայն Թուրքիան բռնագրաւուած կը պահէ այս նահանգները։

Ինչպէս կը սպասուէր, Թուրքիան կ՚ընդդիմանայ այս պահանջներուն, իր Վարչապետին բերնով։

Թղթակիցներու տուած տեսակցութեան մը ընթացքին, Թուրքիոյ կա-

ռավարութեան պետը իր ընդդիմութիւնը հիմնաւորած է հետեւեալ երկու փաստարկութիւններով.—

«Այս նահանգները «միշտ» Թրքական հողեր եղած են.

Ոչ մէկ հայ կը բնակի այս շրջաններուն մէջ»:

Ակէ աւելի ակար ու աւելի անպատկառ փաստարկութիւն անկարելի է երեւակայել:

Ինչպէս պիտի պարզուի յաջորդ էջերուն, պատմական իրադարձութիւնները և աշխարհագրական քարտէզները, ինչպէս նաև միջազգային դաշնագրերը, որոնք ստորագրուած են, ուրիշներու կարգին, նոյնինքն Թուրքիոյ կողմէ, կը փաստեն անժխտելիօրէն որ պահանջուած այդ հողերը հայ ժողովուրդին պատկանած են միշտ և եթէ հոն հիմա այլեւս ոչ մէկ հայ կը բնակի, ասիկա, ընդհակառակը, Թրքական տեսակէտին դատապարտութիւնն իսկ է, որովհետեւ ջարդերը չեն կրնար ստացուածքի իրաւունք տալ ջարդարարներուն:

* * *

ՀԱՅՈՑ ՀՈՂԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐՈՒՆ ԻՐԱԿԱՆ ԵՒ ԻՐԱՒԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Հայ ժողովուրդը կը պահանջէ այսօր հետեւեալ նահանգները.— Կարս, Արտահան, Էրզրում, Տրապիզոն, Վան և Պիթլիս:

Կարսն ու Արտահանը, որոնք մինչև առաջին համաշխարհային պատերազմը ռուսական Հայաստանի մաս կը կազմէին, Թուրքերու կողմէ բռնագրաւեցան 1920ին՝ նախայարձակումով, այդ օրերու կացութենէն օգտուելով:

Էրզրում, Տրապիզոն, Վան և Պիթլիս նահանգները Հայոց տրուեցան Սէվրի դաշնագրով:

Վերոյիշեալ նահանգները առնուազն չորս հազար տարիներէ ի վեր կը պատկանին հայոց և անոնց բնակիչները եղած են միայն հայեր:

Քրիստոսէ 1000 տարի առաջ, Հոմերոսի ժամանակ, Հեղիոտոսի քարտէզին վրայ Հայաստանի տեղը նշանակուած է «Արիմ» բացատրութեամբ:

Հեքաթիոսի (500 Ք. Ա.) և Հերոդոտոսի (450 Ք. Ա.) քարտէզները Հայաստանի տեղը կը բնորոշեն ներկայ անունով՝ «հայեր»:

Յարաբերաբար արդիական քարտէզներէն կը յիշատակենք միայն անգլիացի նշանաւոր աշխարհագէտ Ճէյմս Ուայլտի քարտէզը, որ Լոնտոնի թանգարանին մէջ պահուած է: Այս քարտէզը յստակ կերպով կը ճշդորոշէ 1861-ի Օսմանեան կայսրութեան մէջ Թրքական Հայաստանի վարչական տրածութիւնը. այս տրածութիւնը իր մէջ ճշդրտօրէն կը պարփակէ այն նահանգները, որոնք Նախագահ Վիլսընի վճիռով հայերու տրուեցան:

Ներկայ յուշագրին ծաւալը թոյլ չի տար, որ հոս վերարտադրենք անուա-

նի աշխարհագէտներու պատմական քարտէզները, որոնք Եւրոպայի մեծագոյն մայրաքաղաքներու մատենադարաններուն մէջ զետեղուած են և որոնք կը փաստեն թէ պահանջուած Նահանգները Հայոց Հայրենիքի սահմաններուն մէջ կ'իյնան իսկապէս։

Միւս կողմէ, խիստ չահեկան է ընդգծել նաև որ դարերու ընթացքին Հայաստանի սահմանները փոփոխութեան չեն ենթարկուած, որովհետև բնութիւնը ինք իսկ գծած է զանոնք։

Արդարև, Ստրաբոնի և Պտղոմէոսի, ինչպէս նաև մահմետական աշխարհագէտ Իտրիսսիի գծած (ԺԱ. դար Ք.Ե.) Հայաստանի սահմանները մեզ կ'առաջնորդեն նոյն հաստատումին։

«Աշխարհագրականօրէն Հայաստանը կը ներկայացնէ ճգրիտ ամբողջութիւն մը», կը հաստատէ Ֆոն Օդդօ Ուիլքընս, որ Ֆէլիքս Օզվալտ անգլիացի նշանաւոր գիտունին երկրաբանական աշքառու երկը գերմաներէնի պատշաճեցումով հրատարակած է 1912-ին, Հայլտէլպէրկի մէջ. (տե՛ս Զ. Խանզատեանի «Տեղեկագիր Հայաստանի Աշխարհագրական Միութեան» գործը)։

Նոր ժամանակներու ֆրանսացի նշանաւոր աշխարհագէտ Մալթ-Պրէօն ալ Հայաստանը կը ներկայացնէ նոյն սահմաններով։

Աշխարհի մէջ ո՛չ մէկ ազգ այնքան յստակօրէն զատորոշուած բնական սահմաններ ունի թերեւս, որքան Հայ ժողովուրդը. պատմութեան վերիվայրումները ազգագրական այս սահմանագծումէն ոչինչ փոխած են։

Ուրեմն, պատմական, աշխարհագրական և ազգագրական ճշգրիտ տուեալներու հիման վրայ է որ Նախագահ Վիլսընի, երբ 1920-ի Սեպտեմբերի Վեհաժողովը զինք իրաւարար կարգեց, ճանչցաւ և հայերու սահմանեց վերոյիշեալ չորս նահանգները, քանի որ Կարսն ու Արտահանը արդէն այն ատեն Հայաստանի մաս կը կազմէին։ (Տես քարտէզ թիւ 1)։

Հետեւաբար պատմականօրէն անժխտելի է, որ ներկայիս Թուրքիոյ կողմէ բռնագրաւուած այս նահանգները միշտ պատկանած են հայերու և անոնց բնակիչները եղած են հայեր։

Թուրքիոյ կողմէ ի նպաստ իրեն գործածուած առաջին փաստարկութիւնը ահա այսպէս կը փլի, խաւարքարտէ դղեակի մը պէս։

Գալով երկրորդ փաստարկութեան որ կը հիմնաւորուի անով թէ «ոչ մէկ հայ» գոյութիւն ունի այս շրջաններուն մէջ, և որուն շուրջ այս վերջերս ազմուկ բարձրացաւ Թրքասէր մամուլին մէջ, անիկա ընդհակառակը՝ նոյնիսկ զէնք կը դառնայ Թուրք կառավարութեան դէմ։

Արդարև, այն իրողութիւնը թէ պահանջուած այս նահանգներուն բնակիչները միշտ հայեր եղած են մինչև 1915, երբ Թուրքիա պատերազմ յայտարարեց Դաշնակիցներու դէմ, ճանչցուած է ո՛չ միայն բոլոր պետութեանց կողմէ, այլ նոյնիսկ Թուրքիոյ կողմէ, իր միջազգային դաշնագրերուն մէջ։

Միայն հալածանքներով, կոտորածներով, մանաւանդ 1915 ի զանգուածային տեղահանութիւններով և ջարդերով, (որոնց բարբարոսութիւնը նոյնիսկ նացի պատմութեան մէջ իր հաւասարը չունեցաւ), այդ նահանգները պարպուած են իրենց հայ բնակիչներէն։

Առանց խորունկ յուզմունքի կարելի չէ աչքէ անցնել այս առնչութեամբ այն արիւնոտ քարտէզը, զոր հոս կ'արտատպենք. (Տես քարտ. թիւ 2, մարտանաւի զօրավար Զ. Խանզատեանի կողմէ պատրաստուած)։

Ներկայիս վերապրող հայերը անոնք են, որոնք հրաշքով կրցան անցնիլ ռուսական Հայաստան և կամ այնքան ազնուօրէն հիւրընկալուեցան Արաբական երկիրներու, ինչպէս նաև Յունաստանի և Ֆրանսայի կողմէ։

19րդ դարու կէսէն սկսեալ, հայերու դէմ գործադրուած հալածանքները զայրոյթ յառաջացուցած էին համաշխարհային խղճմտանքին և մամուլին մէջ։

Ուստի, 19 Փետր. 1878 ին, Սան-Սթեֆանոյի Ռուսս-Թուրք դաշնագրին 16րդ յօդուածով Թուրքիա ընդունեց հայերու ի նպաստ բարենորոգումներ կիրարկել այն նահանգներուն մէջ, որոնց բնակիչները հայեր էին և որոնք Թրքական տիրապետութեան տակ կը գտնուէին։

Այս դաշնագիրը փոխարինուեցաւ քանի մը ամիս յետոյ, ճիշդ 13 Յուլիս 1878ին, Պերլինի դաշնագրով, որ ստորագրուեցաւ Եւրոպական պետութեանց և նոյն իսկ Թուրքիոյ դեղմէ։ Այս դաշնագրին 61րդ յօդուածին համաձայն՝ Թուրքիան յանձնառու կ'ըլլար, մեծ պետութեանց հսկողութեան տակ, բարենորոգումներ կատարել հայերու բնակած նահանգներուն մէջ։ Այս բարենորոգումները կը վերաբերէին հայերու կեանքի ու ինչքի ապահովութեան։

Ուրեմն, հո՛ն հայեր կային...

Եւ այնքա՛ն մեծ թիւով հայեր կային որ Թուրք կառավարութիւնը, փոխանակ իր խոստացած բարենորոգումները գործադրելու, ջարդեց 300,000 հայեր՝ 1896ին, Թուրքիոյ Արեւելեան Նահանգներուն մէջ, 30,000 հայեր՝ 1909ին, Կիլիկիոյ մէջ, և 1.500.000 հայեր՝ 1915ին, ամբողջ Թուրքիոյ մէջ. (Տեղեկագիր Լօրտ Ռոպերթ Սըսիլի)։

Եւրոպական պետութիւնները դարձեալ կը միջամտեն, բայց մինչև 1913 չեն յաջողիր բան մը ընել, որովհետև դիւանագիտութիւնը դանդաղաշարժ է։

Գերմանացի նշանաւոր Տօքթ. Եոհաննէս Լեփսիուսը, որ Գերմանական Արեւելեան Առաքելութեան նախագահն էր՝ իր «Գաղտնի տեղեկագիր Հայաստանի Ջարդերու մասին» ընդարձակ գործին մէջ կ'ըսէ.

— «Բարենորոգումներու ծրագիր մը վերջապէս մշակուեցաւ հայկական բնակչութեամբ արեւելեան եօթը նահանգներու վարչութեան համար. այսպէս Թուրքիան գործադրած կ'ըլլար իր խոստումը, զոր տուած էր իր հայ հպատակներուն և վեց մեծ պետութեանց, 1878ի Պերլինի վեհաժողովին մէջ»։

Քիչ մը անդին կ'աւելցնէ.

ՍԵՒ-ԾՈՎ
ՍԱՄՍՈՒՆ
ՏՐԱՊԻԶՈՆ
ԱՐՏԱՇԱՆ
ԼԵՆԻՆԱԿԱՆ
ԿԱՐՍ
ԷՋՄԻԱԾԻՆ
ԵՐԵՒԱՆ
ԱՄԱՍԻԱ
ԹՈՔԱՏ
ՍԵԲԱՍՏԻԱ
ԿԱՐԻՆ
ԱՐԱՐԱՏ
ՊԱՅԱԶԻՏ
ՎԱՆ
ՎԱՆԱՅ ԼԻՃ
ԽՈՅ
ԽԱՐԲԵՐԴ
ՄԱԼԱԹԻԱ
ՊԻԹԼԻՍ
ՄՈՒՇ
ՄԱՐԱՇ
ՄԱՐԶՈՒԱՆ
ՇԱՊԻՆ-ԳԱՐԱՀԻՍԱՐ
ԳՈՂԱՍՍԱՐ
ԷՐԶԸՆԿԱ
ՄԱՆԱԶԿԵՐՏ
ԱՂԼԱՏ
ՄՈՒՇԱՂԻՆ
ՍԱՄՍՈՒՆ
ՕՐՏՈՒ
ԿԻՐԱՍՈՒՆ
ՄԱՐԶՈՒԱՆ
ՆԻԿՍԱՐ
ՇՈՐԻՈՒՄ
ՇԱՆՇԱՐԸ
ՀԱՍԱՆ-ԳԱԼԷ
ԱՒԱՇԿԵՐՏ
ՏՈՒՍՏԻՆ
ԲԵՐԿՐԻ
ԱՐՇԱԿ
ԽՈՇԱՊ
ՌՈՍՏԱՆ
ՇԱՍԻՆ
ՄՈՒՇԱՂԻՆ
ՄՈՒՇԱՐԴԻՆ
ՎԱՐԻԱՆ
ՄՈՒՇԱՐԴԻՆ
ՍԱՐԴԱՐԱՊԱՏ
ՍԱՐԻՆ
ՍԱՄՍՈՒՆ
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ
ՏԻԳՐԻՍ
ՍԱՄՍՈՒՆ
ՍԱՄՍՈՒՆ
ՍԱՄՍՈՒՆ

— «Արդարև այս ծրագիրը ընդունուեցաւ Թուրքիոյ կողմէ 1914ի Յնվ. 26—փետր. 8ին։ Նշանակուեցան երկու ընդհ. քննիչներ յանձին Հոլանդացի Վէսթէնէնկի և Նորվէկիացի Հոֆի, որոնք կ. Պոլիս հասան 1914-ի գարնան։ Երբ պատերազմը պայթեցաւ, Բ. Դուռը չեղեալ նկատեց բարեկարգումներու ծրագիրը եւ եւ դրկեց ընդհանուր քննիչները։

Իր վերոյիշեալ «Գազանի տեղեկագրին» մէջ, Տ.Թ. Լէփսիուս աւելի ծանրօրէն կ'ամբաստանէ Թուրքիան. (էջ 225)։

— «Եւրոպական պատերազմի առաջին օրէն իսկ ու մանաւանդ՝ Ռուսօ-Թուրք պատերազմի սկզբնաւորութենէն ի վեր, Ժէօն Թիւրքերու կոմիտէն կը մտածէր թէ ի՞նչ ձեւով պիտի կարենար պատերազմի մը պատեհ առիթէն օգտուելով հայերը պատժել բարեկարգումներ կորզելու անոնց ճիգերուն համար և միանգամընդմիշտ լուծել հայկական հարցը։ Կոմիտէն յանդգեցաւ լուծումի այն ձեւին զոր Ապտիւլ Համիտի մէկ նախարարը այնքան չնականօրէն բանաձեւած էր. «Հայկական հարցը լուծելու լաւագոյն կերպը հայերու բնաջնջումն է»։ (էջ 225)։

Այս վկայութիւնը բացորոշ կերպով անժխտելի է, որովհետեւ անիկա նախ Գերմանացիի՝ մը վկայութիւնն է և յետոյ՝ ըսուած է այնպիսի շրջանի մը, երբ Գերմանիան զինակիցն էր Թուրքիոյ։

Եւ արդէն այս վկայութիւնը միակը չէ բնաւ։ Պր. Մորկենթաու՝ որ մինչև 1916 կ.Պոլսոյ Միացեալ Նահանգներու դեսպանութիւնը վարեց, իր «Յուշեր»ուն մէջ կը յիշատակէ (Հրատ. Փայլ և ընկ. Բարիզ) թէ այն ատենուան Թուրք Մեծ Վէզիր Թալաաթ ըսած էր իրեն.

— «Հայկական խնդիրը լուծելու համար ես չատ աւելի ըրի երեք ամսուան մէջ, քան Ապտիւլ Համիտ՝ երեսուն տարուան մէջ։»

Գերմանացի Տօքթ. Նիփակեն ևս, որ Հալէպի գերմանական դպրոցին մէջ ուսուցչութեան պաշտօն կը վարէր, կը վկայէ.

— «Մուսուլի Գերման հիւպատոսը, Հալէպի գերմանական քաղինոյին մէջ, իմ ներկայութեանս պատմեց թէ երբ Մուսուլէն Հալէպ կու գար, ճամբան չատ մը տեղեր կտրուած մանկական ձեռքեր տեսած էր այնքան շատ որ այդ ճամբան սալայատակելու պիտի բաւեր»։

Բրիտանական կառավարութեան «Կապոյտ Գրքին» մէջ («Այլևայլ Թ. 31, 1916»), բարձրաստիճան անգլիացի պետական դէմք՝ Լորտ ճէյմս Պրայս կը գրէ.

— «Մարդ կը մղուի ինքնիրեն հարց տալու թէ արդեօք կարելի՞ բան էր որ մարդկային էակներ կրցան նման ոճիրներ գործել, անմեղ կիներու և մանուկներու վրայ, բայց նախորդ ջարդե-

բու յիշատակը ցոյց կու տայ թէ՝ նման ոճիրներ մաս կը կազմեն այն քաղաքականութեան, որ հաստատուած եւ յանախ կրկնուած է թուրք կառավարութեանց կողմէ։ Բիօս կղզիին մէջ, մօտ հարիւր տարի առաջ Թուրքեր ջարդեցին գրեթէ ամբողջ յոյն բնակչութիւնը»։ (Տեսնել վերոյիշեալ «կապոյտ Գիրք»ին ֆրանսերէն թարգմանութիւնը՝ էջ 23)։

Աւելի անդին, Պրայս կ'եզրակացնէ.—

«Վկայութիւնները շատ են. մէկը միւսը կը հաստատէ, որովհետեւ մէկը միւսէն անկախ է։ Գլխաւոր դէպքերը միշտ նոյնն են և կը յայտնեն նո՛յն նպատակներուն եւ նո՛յն ծրագիրներուն գործադրութիւնը»։ (Նոյն աղբիւր, էջ 24)։

Թուրք կառավարութեան հետեւած քաղաքականութիւնը որոշ է ուրեմն. բնաջնջել բոլոր Հայերը՝ վերջ տալու համար «միանգամընդմիշտ» Հայկական Հարցին։

Որով կը հասկցուի թէ ինչո՛ւ «նոյնիսկ մէկ Հայ անգամ չկայ այլեւս այս գօտիներուն մէջ», հղամասեր՝ որ ժամանակին ո՛ւնքան ծաղկեալ էին ու ո՛ւնքան լեցուն՝ Հայերով...։

Բայց ջարդերը չեն կրնար սեփականութեան իրաւունք ստեղծել՝ ի նպաստ իրենց հեղինակին, այս նահանգներուն վրայ։

Տարբական արդարութեան այս տեսակէտը արդէն ընդունուեցաւ 1918ի Յաղթականներուն կողմէ, Սեւրի դաշնագրով (10 Օգոստոս 1920), դաշնագիր՝ զոր ընդունեց և ստորագրեց նաև նոյնինքն Թուրքիա։

Եւ արդէն, այս դաշնագրին 89րդ յօդուածին համաձայն.—

«Թուրքիան և Հայաստանը, ինպէս նաև դաշնագիր Բարձր Կողմերը կը համաձայնին Ամերիկայի Միացեալ Նահանգներու Նախագահին իրաւարարութեան ենթարկել Թուրքիոյ և Հայաստանի սահմաններուն ճշդորոշումը՝ Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Պիթլիսի վիլայէթներու սահմանին մէջ և կ'ընդունին իր վճիռը, ինչպէս նաև բոլոր այն տրամադրութիւնները, զորս կրնայ որոշել Հայաստանի ծովի վրայ ունենալիք ելքի մը մասին, և վերոյիշեալ սահմանին կից օսմանեան հղամասին ապագինումին վերաբերեալ»։

Քանի մը ամիս յետոյ՝ Նախագահ Ուիլսըն ճշդորոշեց այս սահմանները (Տեսնել թիւ 2 քարտէզը)։

Արդ, ճիշդ այս սահմաններուն մէջ կը մնանեն այն նահանգները՝ զորս Հայերը կը պահանջեն այժմ։

Բայց, այսօր, Թուրքերը պիտի ուզէին մերժել Հայոց վերադարձնել ի՛նչ որ բացայայտորէն մեզի տուին 1920ին, Սեւրի դաշնագրով։

Այդ թուականէն ասդին ի՞նչ կայ փոխուած։

1920ին, ինչպէս այսօր, «ոչ իսկ մէկ հայ կը ընակէր այս գօտիներուն մէջ», ջարդերու և տեղահանութեանց հետեւանքով։ Բայց ո՛չ ոք՝ Սեւրի մէջ, նոյն իսկ Թրքական Պատուիրակութիւնը չէր խորհած այս կացութենէն հանել փաստ մը ի նպաստ ջարդերու հեղինակին և ի վնաս դաշնակից ժողովուրդի մը՝ որ, աւելին ըլլալով, զոհն իսկ էր այս ջարդերուն։

Հետեւաբար, Հայոց հողային պահանջները մերժելը՝ որովհետեւ «ո՛չ իսկ մէկ հայ կ՚ապրի այլեւս այս գօտիներուն մէջ», պիտի նշանակէր վարձատրել ջարդարարները»։

* * *

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՏՈՒՐՔԸ ՔԱՂԱՔԱԿԵՐԹՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐԿՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՒՆ

Հայ ժողովուրդը ամէնէն հիներէն մէկն է այն ժողովուրդներուն՝ որ ապրեցան Թուրքիոյ կողմէ գրաւուած երկիրներու մէջ։

Խօսելով Հայոց մասին, Ազգերու Դաշնակցութեան առաջին ընդհ. ժողովին, 17 Նոյեմբեր 1920, Լորտ Ռոպերտ Սեսիլ ըսաւ. «Ժողովուրդ մը՝ մեծ ուշիմութեամբ օժտուած, ընդարձակ մշակոյթով և հին քաղաքակրթութեամբ»։

Նախ հին Յունաստանի, յետոյ՝ Եւրոպայի հետ իր մտաւորական յարաբերութիւնով, Հայը եղաւ՝ Միջին Արեւելքի մէջ, արեւմտեան քաղաքակրթութիւնը տարածող առաջին ռահվիրաներէն մէկը։

Հոմերոսէն սկսելով՝ բոլոր դասականները ունեցան իրենց թարգմանութիւնները, արձակ կամ չափածոյ, ըստ իրենց ընտրութիւններուն։

Հայ լեզուն՝ ծագումով հնդեւրոպական, հարուստ և արտայայտիչ, իր Ոսկեդարը ապրեցաւ հինգերորդ դարուն։

Հայկական ճարտարարուեստը ինքնատիպ է և Բիւզանդական չատ մը ճարտարարուեստի հրաշալիքները հայերու գործերն են։

Բացայայտօրէն կարելի է ցոյց տալ որ երկար դարերու վերիվայրումները չկրցան կորսնցնել տալ Հայ ժողովուրդին՝ իր նկարագիրը, իր լեզուն, իր մշակոյթը։

Այս ժողովուրդը միշտ սիրեց իր ազատութիւնը. իր դարերու պայքարները՝ լաւագոյն փաստն են այս մասին, ինչպէս նաև իր նկարագրին հպարտութեան։ Արդարև՝ տեսնուեցաւ որ հայը ձեռք չերկարեց օտարութեան մէջ ուրիշին, այլ աշխատեցաւ տաժանագին՝ ամենօրեայ իր հացին ի խնդիր։

Հայ ժողովուրդը կռուեցաւ նաև Դաշնակիցներու կողքին, երկու համաշխարհային պատերազմներու ընթացքին՝ չարիք նիւթողներու դէմ։

Աշխարհի վրայ, ո՛չ մէկ ժողովուրդ այս պայքարին համար այնքան զոհած է որքա՛ն հայը, երբ նկատի առնենք անոր թիւը։

Համաշխարհային առաջին պատերազմի ընթացքին մէկուկէս միլիոնը բնաջնջուեցաւ Թուրքիոյ մէջ ապրող երկուքուկէս միլիոն հայերէն (Տես՝ Լօրտ Ռոպըրդ Սըսիլի Տեղեկագիրը) և իրենց բոլոր ինչքերը բռնազրաւուեցան հոն։



EINE TOTE STADT IN KLEINASIEN (ՎԱՆ՝ «Մեռած քաղաք մը՝ Փոքր-Ասիոյ մէջ»)։

Պատմական իրողութիւն մըն է որ Հայ ժողովուրդը՝ երկու Յաղթանակներու մէջ ալ՝ ունեցաւ իր բաժինը։

Մարաշախտ Ալլէնպի՝ Արեւելքի Դաշնակից բանակներու վերին հրամանատարը՝ կը յայտարէր իր 12 Հոկտեմբեր 1918ի հեռագրին մէջ.

— «Հպարտ եմ որ հրամանատարութեանս տակ ունիմ Հայկական զօրամաս մը։ Անց փայլուն կերպով կռուեցաւ եւ մեծ բաժինը ունեցաւ յաղթանակին մէջ»։

Արարայի պատուոյ դաշտին վրայ ինկած Հայերուն յուղարկաւորութեան՝ Ֆրանսացի հրամանատարը իր 20 Սեպտեմբեր 1918ի ճառին մէջ կ'ըսէր ի միջի այլոց.

— «Այս հողին վրայ՝ ուր երէկ ամէնէն դոյզն չարժու�ն անդամ մահ կը բերէր, մենք հպարտ մխիթարութիւնն ունինք Հայ հերոսներ պատանքելու, բոլորն ալ ինկած՝ թշնամիին դէմ առաջին գծին վրայ ճակատելով և օրինակ տալով։

«Բոլորն արժանի են «Ռազմի խաչ»ին, բոլորն ալ Պատուոյ Լեգեոնի անուակիր եւ Արեւելեան Լեգեոնի սուրբեր են։

«Ննջեցէք ձեր փառքին մէջ, դո՛ւք որ ճամբան բացիք Արդարութեան և Իրաւունքի՝ որոնք դարերէ ի վեր վանուած էին այս հողամասերէն։ Մենք պիտի գիտնանք արժանի ըլլալ ձեզի, որպէսզի այս հատուցումը ըլլայ կատարեալ և տեւական։ Կ'երդնում այս մասին, ձեր դամբանները վրայ»։ («La Réforme»· 10 Հոկտ· 1918)։

Գերմանացիք, իրենք ևս գնահատեցին այս ծառայութիւնները, զորս Հայեր մատուցին ի նպաստ Դաշնակիցներու յաղթանակին։ Զօրավար Լուտէնտորֆ կ'ընդունի, իր ցիտատներ-ուն մէջ, թէ՝ «Գերմանական բանակին պարտութեան գլխաւոր պատճառը վառելանիւթի պակասն էր. որովհետև Թուրքեր չկրցան տանին Պաքու հասնիլ»։ Արդ, Հայերն էին որ պաշտպանեցին այս շրջանը։

Համաշխարհային երկրորդ պատերազմի յաղթանակին Հայերու բերած տուրքը մասնաւորաբար, մե՛ծ եղաւ, և այս կը ներկայացնէ անոնց զոհողութիւններուն առաւելագոյնը, որ կրնային ընել։

Սովետական Հայաստան պատերազմեցաւ, կարմիր Դրօշի տակ, իր 300 հազար զինուորներով և աւելի քան 50 զօրավարներով։ Ան հպարտ է որ իր զաւակներէն 80 է աւելին «Սովեսական Միութեան Հերոս» կոչուելու պատուին արժանացան։ Ուրիշներ՝ 32,000ի չլացուցիչ թիւով, ստացան զանազան պատուանշաններ՝ իրենց աչքառու հերոսութեանց համար։ Եւ ամբողջ Սովետ Միութեան մէջ Հայոց թիւը 2,500,000ը է՝ անցնիր, որուն 1,300,000ը՝ Սովետական Հայաստանի մէջ։

«Թամանեան» կոչուող զօրաբաժինը՝ միմիայն հայերէ կազմուած, և որ նշանաւոր հանդիսացաւ Թամանի և Քէրչի կռիւներուն ընթացքին, պատիւն ունեցաւ գտնուելու այն զօրաբանակներու մէջ՝ որոնք առաջինը եղան Պերլինի վրայ կարմիր Դրօշ կոթողելու։ Եւ անկէ ի վեր անիկա կոչուեցաւ «Թամանեան-Պերլինեան զօրաբանակ»։ Զօրավար Բաղրամեան՝ հրամանատար Պալթեան առաջին ճակատի, որ չատ մը յաղթանակներու կարգին տարաւ Քուրսքի և Վիթէպսքի յաղթանակները, միշտ յիշատակուեցաւ ռատիօներու և հեռագիրներու մէջ, պատերազմի տարիներուն։ Հայեր քաջաբար մասնակցեցան նաև Մոսկուայի, Լենինկրատի, Սթալինկրատի և ուրիշ վայրերու կռիւներուն։

Ամերիկեան բանակի մէջ ծառայող Հայերն ալ աչքառու դարձան իրենց քաջութեամբ։

Ֆրանսայի Հայերը կամաւորագրուեցան Դիմադրական Շարժումին (Ռեզիսսանս)։

Ամէնէն իրաւասու իշխանութիւնները կը վկայեն թէ՝ ո՛չ մէկ Հայ զինուոր դասալիք եղած է։

Սովետական Հայաստանէն ներս ալ ժողովուրդը աշխատեցաւ տենդագին՝ ճակատին համար, անմիջական անհրաժեշտութիւններէն իսկ զրկելով ինքզինք։

Հայ ժողովուրդը իրաւունք ունի ուրեմն հպարտ զգալու ինքզինքը, որ այսպիսի հարուստ տուրք է վճարած Քաղաքակրթութեան և չարիքը նիւթողներու դէմ տարուած երկու յաղթանակներուն։

* * *

Հայկական հողային պահանջները արդար են ուրեմն՝ թէ իրապէս, թէ փաստօրէն։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Պահանջուած Նահանգներուն կցումը Սովետական Հայաստանին, հնարաւորութիւն պիտի տայ արտասահման ցրուած մէկուկէս միլիոն հայերուն՝ ներգաղթին։

Բայց Ս. Հայաստան չի կրնար անոնց բոլորը ընդունիլ, իր ներկայ սահմանները չատ նեղ են։ Արդարեւ, ան ունի միայն մօտ 30,000 քառակուսի քիլոմէթր տարածութիւն, մինչդեռ, չորս նահանգները (Էրզրում, Տրապիզոն, Վան և Պիթլիս) որ այժմ Թրքական բռնագրաւումին տակ կը գտնուին, ունին 170,000 քառ. քիլոմէթր տարածութիւն, տարածութիւն՝ որմէ միայն 95,000ը հայերո՛ւ տրուեցաւ Նախագահ Ուիլսընի վճիռով։

Եթէ «ո՛չ մէկ Հայ» կայ այս նահանգներուն մէջ, ապա, սակայն, այդ հողերը բնակուած չեն և գրեթէ ամայի են Հայոց ջարդէն մինչեւ այսօր։

Վկայութիւնը նոյնիսկ գերմանացիներու՝ որոնց հանդէպ թուրքերը միշտ ամենեւսին պաշտամունք մը ունին, պակաս վճռական չէ այս մասին։ Լայբցիկ հրատարակուող «Illustrirte Zeitung» գերմանական նշանաւոր հանդէսը իր 1 Դեկտ. 1918ի 4890 թիւով ընդհանուր տեսարան մը կու տայ դեռ 1918ին ամբողջովին աւերակ դարձած քաղաքէն, հետեւեալ խորագրով. «Փոքր Ասիոյ մէջ մեռած քաղաք մը». (Տես համայնապատկեր թիւ 1 նկարը)։

Գերմանական հանդէսը հոն կ՚ըսէ ի մէջ այլոց.

— «30 տարի առաջ Վան կը կոչուէր Պարսկահայրու Քաղաք։ Այսօր կարելի է ըսել թէ անիկա աւերակներու քաղաք մըն է»։ Եւ կ՚աւելցնէ քիչ մը անդին.

— «Վան՝ Հայոց թագաւորութեան կեդրոնն էր։ Այցելուներ ամբողջութեամբ կը հաստատեն այսօր՝ այդքան մեծ անցեալի մը կորուստը»։

Հանրածանօթ Պրայս հաստատած էր, ինք եւս, թէ՝

— «Վանի վիլայէթը՝ Թրքական կայսրութեան ամէնէն հոծ հայաբնակ նահանգն էր»։ (Տես՝ «Կապոյտ Գիրք», էջ 176)։

Եւ Գերմանական Հանդէսը կ՚եզրակացնէ.

— «Աւերակոյտի վերածուած Թրքական այս հողամասը օգնութեան պէտք ունի, յառաջդիմելու համար»։

Պրն. Ժաք Կրանչէ, «Les Lettres Françaises»ի կողմէ մանրակրկիտ քննութիւն մը կատարեց, վերջերս, Թուրքիոյ մէջ։ Վերադարձին՝ այս մեծ շաբաթաթերթի 1946 Ապրիլ 26ի 105րդ թիւին մէջ այսպէս գրեց.

— «Թուրքիան իմ անցած երկիրներուս մէջ ամէնէն աղքատն է։ Աղքատ ողբերգականօրէն, տեսանելիօրէն, զգայուցանելու տակ ինկող աղքատութեամբ մը, եմէ համարձակիմ գործածել այս բացատրութիւնը։

Եւ այս ողբերգական աղքատութիւնը նկարագրելէ յետոյ, թղթակիցը կը վկայէ նաեւ թէ կինը հոն կ՚աշխատցնեն որպէս «գրաստ»։

Խօսելով վերոյիշեալ վեց վիլայէթներու մասին «Tribune des Nations»ի 12 Ապրիլ 1946ի թիւին մէջ, Պրն. ԱնտրէՏը Ռէքա զանոնք կ՚որակէ. «Հող առանց ժողովուրդի» բացատրութեամբ և կ՚աւելցնէ.

— «Թուրքերու կողմէ պահանջուած հոմասերը որոնք արդէն գործնապէս իրենց տիրապետութեան տակն են այժմ, բնակչութենէ զուրկ են։ Պարագան այսպէս է Կարսի նահանգին համար։ Գալով Թրքահայաստանի վիլայէթներուն՝ հոն միայն կենդանիներու երամակներ կը շրջին, որոնց կը հետեւին քանի մը քիւրտ հովիներ։

Այս վկայութիւնները ուրեմն ջախջախիչ են ու վճռական, — աւերակներ, ամայութիւն՝ կը տիրէ այս նահանգներուն մէջ՝ որ ժամանակին ա՜յնքան բազմամարդ և ծաղկեալ էին։

Վիքթոր Հիւկո իրաւունք ունէր բացականչելու՝ իր «Les Orientales» անուն նշանաւոր երկին մէջ. — «Թուրքերը հոնկէ անցան։ Ամէն ինչ աւերակ է եւ սուգ»։

Հետեւաբար կացութիւնը սրատմ՛ելիկ է բոլոր այս նահանգներուն մէջ՝ զորս Հայերը կը պահանջեն և որ այժմ Թուրքիոյ բռնագրաւումին տակ կը գտնուին։

Բայց, ընդհակառակը, մենք չերմօրէն պիտի փափաքէինք որ այցելութիւն մը տրուէր այս նահանգներուն սահմաններէն դէպի Արեւելք՝ Սովետական Հայաստանին, այդ փոքրիկ երկրին որ դեռ քառասուն դար առաջ կատարեալ աւերածութեան և ամէնէն յուսահատական վիճակի մէջ էր։ Արդ՝ Սովետական Հայաստան այսօր հպարտ է որ կրցաւ, ա՜յսքան կարճ ժամանակի ընթացքին, կառուցանել՝ հիանալիօրէն արդիական քաղաքներ ու գիւղեր,

համալսարաններ, գիտական հիմնարկներ, բազմաթիւ դպրոցներ՝ (այլևս անգրագէտ հայ չկայ), գործարաններ, օփերաներ, թատրոններ, զօնսէրվատուարներ, հիւանդանոցներ, գիտական աշխատանոցներ, ճամբաներ, զանազան հաստատութիւններ, և.ն.։

Դեռ ասիկա ամբողջը չէ։

Երբ Հայ ժողովուրդը առանց սակարկութեան, Դաշնակիցներու կողքին կանգնեցաւ արդարութեան և մարդկային արժանապատուութեան ըսկզբունքներուն յաղթանակին համար, ընդհանրապէս՝ Թուրքիան միացաւ Գերմանիոյ, որ աշխարհը կրակի և արիւնի մատնեց երկու անգամ՝ քառորդ դարէն պակաս ժամանակի մը մէջ։



Համայնապատկեր մը Երեւանեն

Արդարև, Թուրքիան կայսերական Գերմանիոյ պաշտօնական դաշնակիցն էր առաջին համաշխարհային պատերազմին, և հակառակ իր «չեզոքութեան» անիկա չվարանեցաւ հիթլէրական Գերմանիոյ օգնելու այս երկրորդ մեծ պատերազմին։

Անգլիոյ ամէնէն որակեալ պետական անձը՝ Ուինսթըն Չըրչիլ իր ճառերէն մէկուն մէջ յայտարարեց թէ Թուրքիան «իրական վախեր առթեց Անգլիոյ, 1939 — 1945 թուականներուն։

Իզվեսթիայի 29 Նոյ. 1946ի թիւին մէջ, աշխարհածանօթ լրագրող Վասիլիէվ հրապարակ հանեց ա՛յն օգնութիւնը զոր Թուրքիա բերած է Գեր-


ՍԵՒ-ԾՈՎ
ՍԱՄՍՈՒՆ
ՏՐԱՊԻԶՈՆ
ԱՐՏԱՇԱՆ
ԼԵՆԻՆԱԿԱՆ
ԿԱՐՍ
ԷՋՄԻԱԾԻՆ
ԵՐԵՒԱՆ
ԱՍՍԱՍԻԱ
ԹՕՋԱՏ
ԱՍԵՊԱՍՏԻԱ
ԿԱՐԻՆ
ՍՈՒՇ
ՎԱՆ
ԽՈՅ
ԽԱՐԲԵՐԴ
ՄԱԼԱԹԻԱ
ԿԵՍԱՐԻԱ
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ
ՏԻԳՐԻՍ
ՍԱՄՍՈՒՆ
ԱՍՏԱՆ
ԱՅՆԹԱՊ
ՇԱԼԷՊ
ԵՐԵՍԻԱ
ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ
ԾՈՎ
ՀԱՅԱԲՆԱԿ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ՋԱՐԴԻ
ԵՒ ՏԻՂՀԱՆՈՒԲԵԱՆ ՋՈՒՐԵՐՈՒ
ԱՍՏԻՃԱՆԱՉԱՓ
10 հ. 20 հ. 30000
100 PL.

մանացիներուն և Իտալացիներուն՝ վերջին պատերազմի ամբողջ տեւողութեան։ Կուտայ նոյնիսկ անունները գերմանական և իտալական այն նաւերուն՝ որոնց Տարտանելէն դէպի Սև Ծով անցքը արգելուեցաւ Թուրքիոյ կողմէ, որպէսզի անոնք Սովետ Միութեան դէմ պայքարին և վառելանիւթ հայթայթեն գերմանական բանակին։

Թէ Թուրքիա օգնեց, վերջին պատերազմին հիթլէրական Գերմանիոյ, իրողութիւն մըն է ուրեմն, որ այլևս փաստարկութեան չի կարօտիր։

Եւրոպան յաջորդաբար ազատագրեց, Թրքական լուծին ենթարկուած բոլոր երկիրները.— նախ՝ Պալքանները, յետոյ՝ Սուրիան, Իրաքը, Լիբանանը, Պաղեստինը, Անդրյորդանանը, եւն.։

Արդեօք կրնա՞յ գոյութիւն ունենալ արդարանալի պատճառ մը որպէսզի Հայկական Նահանգները բացառութիւն կազմեն։

Ո՛չ մէկ պատճառ։

Մինչդեռ, Հայ ժողովուրդը բազմաթիւ պատճառներ ունի — վերեւ բացատրուած և փաստուած — պահանջելու այն Նահանգները, որոնք իր սեփականութիւնը եղած են 40 դարերէ ի վեր։

Հիմա դարձեալ, Յաղթականները կոչուած են խաղաղութիւն տալու աշխարհի և անոնք գիտեն որ այս խաղաղութիւնը չի կրնար հաստատուն և տեւական ըլլալ՝ եթէ արդար և ամբողջական չըլլայ ան։

Հետեւաբար, Հայ ժողովուրդը համոզուած է թէ Զարագործներու մեծ Յաղթականները պիտի նկատի ունենան որ այս արդարութիւնը չի կրնար ամբողջական ըլլալ՝ ոչ ալ խաղաղութիւնը՝ տեւական, ցորչափ արդար գոհացում չէ տրուած հայ ժողովուրդի պահանջներուն, այս անվերապահ Դաշնակցին, այս քաջ և բազմաթիւ փորձանքներու ենթարկուած ժողովուրդին, որուն նկատմամբ՝ անժխտելի տուեալներու վրայ հիմնուած՝ կտրուկ և պաշտօնական այնքան յանձնառութիւններ յայտարարեցին երէկի և այսօրուան Մեծ Պետութիւնները։

Ի ԴԻՄԱՑ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

Ս. ՇԱՀՊԱԶ ԱԼ. ՍԱՐՈՒԽԱՆ

A II 77837

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ՝, ՊԵՏԱԿԱՆ ԱՆՁՆԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՄՈՒԼԻ ԵՒ ԴԷՄՔԵՐՈՒ ՄՏԱԾՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԶԳԱՑՈՒՄՆԵՐԸ

(ՀԱՏՈՒԱԾՆԵՐ)

ԳՐԻԳՈՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Հայաստանի Կոմունիստ (բ) Կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէի Ընդհ. Քարտուղար եւ Հայ ժողովուրդի յաղթանակները կերտող մեծ դեկավարին 9 Փետրուար 1946 թուին ՍՍՌՄ-ի Գերագոյն Սովետի երեսփոխանութեան Երեւանի ընտրական օկրուգի ընտրողներու նախընտրական ժողովին մէջ արտասանած ճառէն:

«Դուք գիտէք Միութենական կառավարութեան որոշումը՝ որ հրապարակուել է մամուլում՝ արտասահմանեան երկիրներից Հայերի վերադարձը իրենց Հայրենիք՝ Սովետական Հայաստան՝ թոյլատրելու մասին: Մեծ է Միութենական կառավարութեան այդ որոշման նշանակութիւնը: Իրագործելով այդ որոշումը՝ մենք նորմալ պայմաններ կը ստեղծենք հայ ժողովուրդի հետագայ զարգացման համար՝ նրա կուլտուրայի ու լեզուի է՛լ աւելի մեծ ծաղկման համար:

Արտասահմանեան Հայերը խանդավառութեամբ ընդունեցին Սովետական Միութեան կառավարութեան այդ պատմական որոշումը՝ այն դիտելով որպէս Սովետական կառավարութեան հումանիզմի մեծագոյն ակտ, որը հնարաւորութիւն է տալիս իրագործելու Հայերի իղձը՝ միաւորելու միասնական ընտանիքի մէջ և համատեղ ջանքերով պայքարելու իրենց սոցիալիստական հայրենիքի ծաղկման համար: Այդ որոշման մէջ ամբողջ Հայ ժողովուրդը տեսնում է մեծ Ստալինի ցուցաբերած հայրական ջերմ հոգատարութիւնը Հայերի նկատմամբ:

...Արտասահմանեան հայերի թիւը մօտ մէկ միլիոն է: Ի հարկէ՝ մենք բոլորին չենք կարողանայ ընդունել ներկայի Հայաստանի տերիտորիայում: Ամենաուշադիր հաշուարկումով՝ նկատի ունենալով մեր ռեսուրսլիկայի արդիւնաբերութեան մեծ զարգացումը՝ գիւղատնտեսութեան ուժեղացումը՝ որը կարող է զբաղեցնել շատ աւելի աշխատող ձեռքեր՝ մենք յառաջիկայ տարիներում Հայաստանի ներկայ տերիտորիայում կարող ենք ընդունել մաքսիմում 350—400 հազար մարդ: Այն ինչ ցանկացողները շատ աւելի շատ են: Մենք ի՞նչպէս պէտք է վարուենք մնացողների հետ: Մնացած 500—600 հազար Հայերին ընդունելու համար՝ մենք հարց ենք դնում՝ որ Սովետական Հայաստանին վերադարձուեն Թուրքիայի կողմից զաւթած հայկական մարզերը:

Միայն այդ պայմանով մենք կը կարողանանք ընդունել բոլոր ցանկացող

Հայերին։ Իսկ նրանց մերժելու մենք ոչ մի բարոյական իրաւունք չունենք։ Դա՛ է ներկայումս Թուրքիայի ձեռքին գտնուող հայկական մարզերը Սովետական Հայաստանին վերադարձնելու հարցի ամբմէականութիւնը։ Մենք հաստատակամօրէն կը ձգտենք մեր առաջադրած հարցի դրական լուծմանը, նկատի ունենալով նրա այժմէականութիւնը։

...Ռուսները, որպէս Հայ ժողովրդի իսկական բարեկամներ, անչափնդրօրէն պաշտպանում՝ են Հայերի այդ արդարացի պահանջը։

...Սովետական Միութեան ժողովուրդների պաշտպանութեամբ, Միութենական կառավարութեան պաշտպանութեամբ մենք կը հասնենք մեր օրինական պահանջների բաւարարմանը։ Եւ միայն դրանից յետոյ մենք կարող կը լինենք յայտարարել, որ պայմաններ ենք ստեղծել արտասահմանում գըտնուող և իր ժամանակին իր հայրենի հարազատ հողերից Թուրքիայի կողմից վտարուած բոլոր Հայերին հայրենիք վերադարձնելու համար»։

*

«ՓՐԱՎԴԱ»

(Սովետ Միութեան Պոլշեւիկ Կուսակցութեան Կենտկոմի օրգան)

«Ծաղկեալ Սովետ Հայաստանի վերելքը, համայն հայութիւնը խանդավառած է և իր վրայ կեդրոնացուցած՝ ամէն մէկ Հայու յոյսն ու մտասեւեռումը։

Թրքահայութիւնը, այս պատերազմի ընթացքին համոզուեցաւ թէ միայն յաղթական Սովետական մեծ Միութիւնը կրնայ սրբագրել իրեն եղած անարդարութիւնը։ Այս իսկ պատճառաւ, արտասահմանի մէկուկէս միլիոն հայութիւնը՝ Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսին և ապա Հայաստանի կառավարութեան միջոցով կը դիմէ, որ իր արդար իրաւունքը եղող ծննդավայր հայրենիքը՝ Վան, Պիթլիս և Կարին, Սովետական Հայաստանին կցուին։

Հայութիւնը լիայոյս է թէ Սովետ Հայաստանը ի վիճակի է և ունի լայն միջոցներ՝ ձեռք բերելու պատմականօրէն իր իրաւունքը եղող Նահանգները, որպէսզի արտասահմանի Հայութիւնը տեղաւորուի իր հայրենի հողին վրայ։

Սովետ Հայաստան ունի միջոցներն ու հնարաւորութիւնները այս նահանգներն ալ դարձնելու ծաղկեալ ու բարգաւաճ, որպիսին է արդի Սովետ Հայաստանը։ Ան ունի միջոցներ ընդունելու բոլանդակ հայութիւնը և ի վիճակի է զանոնք տեղաւորելու պատմական այս Նահանգներուն վրայ, ապահովելով անոնց ապրուստն ու բոլոր կարիքները։

Կովկասահայութեան իրաւունքն է Սուրմալու, Կարս և Արտահան, իսկ Թրքահայութեան իրաւունքն է Վան, Պիթլիս և Կարին Վիլայէթները»։

*

«ՄԱՐՍԷՅԷԶ» (Կոմկուսի Թերթ)

«Հարիւր հազարաւոր Հայեր և Վրացիներ մեռան բոլոր ռազմադաշտերուն վրայ, յանուն ազատութեան և դեմոկրատիայի։

Այս ժամանակամիջոցին, Թուրքերը, երեւութական չեզոքութեան մը դիմակին տակ, թանկագին օգնութիւն մը ընծայեցին հիտլերականներուն։

Հայ և վրացի ժողովուրդները, իրենց արեան գնով չահեցան իրաւունքը՝ ամբողջ աշխարհի երեսին յայտարարելու իրենց պահանջները։ 1921ի անարդարութիւններէն ամէնէն մեծը դարմանելը նուազագոյն բան մըն է։»

ԱՆՐԻ ՎԷՐՆԷՕԹ

*

ԻՎԸՆՍ ՍՊԷՆԼԻ

(Անկլօ-Սովեթ Ընկերակցութեան Պատուիրակութեան Պետ)։

«Երբ Սովետ Հայաստան եկանք, տեսանք թէ գործնական և կենսական խնդիր մըն է Թուրքիոյ կողմէ բռնի ուժով անջատուած հողերու խնդիրը և թէ առանց ատոր լուծման Հայաստան չի կրնար ընդունիլ ամբողջ աշխարհի երեսը ցրուած հարիւր հազարներով Հայերը»։

*

(Հայասանի Հանդէպ Արդար Կեցուածքի Համար Ամերիկեան Պայքարող Կոմիտէի՝ Արս. Գործոց Նախարարներու Խորհրդաժողովին ուղղած 27 Դեկ. 1945ի նեռագրէն)։

«Իրենց հնօրեայ պատմական աւանդութիւններէն խլուած մեծ թիւով Հայեր, ներկայիս կ'ուզեն վերադառնալ Հայաստանի Սովետական Հանրապետութիւն։ Այս կրնայ իրականացուիլ, միմիայն Սովետ Հայաստանի կցումովը ներկայիս Թուրք գերիշխանութեան տակ գտնուող հողերու, որոնք ցեղագրական տուեալներու հիման վրայ, Հայաստանի մաս նկատուեցան Նախագահ Ուիլսընի կողմէ՝ որ 1920-ին, Դաշնակից Տէրութեանց գերագոյն Խորհուրդին առաջարկով իրաւագատի վճիռն արձակեց։»

*

(Հայ դատին ի նպաստ՝ 1946ի Սալ Վակրամի Միքինկին արտասանուած ճառերէն)։

ԶՕՐ. ՊՐԷՄՈՆ

«Թրքահայաստանի մէջ Հայ չգտնուելու փաստը, չի կրնար երբեք հայկ. հարցի արդար լուծումը արգիլող պատճառ մը ըլլալ։ Մենք հաւատացած ենք, որ քաղաքակիրթ երկիրները չեն կրնար, առանց հայկական պահանջներուն գոհացում տալու, ո՛չ տեւական խաղաղութիւն ստեղծել ժողովուրդներու մէջ և ոչ ալ քաղաքակրթութեան պատիւը փրկել։ Մենք պիտի աշխատինք մինչեւ վերջը, որպէսզի հաշտութեան ժողովները վերջ չըգընեն, առանց այդ հարցը լուծելու»։

*

ՄԱՐՍԷԼ ԲԱՇԷՆ

...«Ատենն է որ այլեւս գործադրութեան դրուին հայուն տրուած խոստումները, որոնց չօշափելի ձեւակերպումը կատարած է պետական մեծ ու գաղափարական դէմք մը՝ Ամերիկայի նախկին նախագահը՝ Վիլսըն։

Ֆրանսայի ժողովուրդը մինչեւ վերջ պիտի հետապնդէ հայ դատը որպէսզի արդարօրէն լուծուի։ Պէտք է ընդունիլ որ այսօր այդ դատին հանդէպ միակ յստակ ու գրական դիրք ունեցողը Խորհրդային Միութիւնն է»։

ՀԱՅ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՆՈՒՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0214370

-ՀԱՅ-

ԳԻՆ՝ 500 Ս. ԳՀԿՆ.

ՀԱՍՑԵ.—
Dr. A. Khatchadourian,
Rue Khandek,
ALEP - SYRIE